

Կ Ա Ր Գ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԿԱՆ,
ՋՐԱՅԻՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ, ԱՅԼ ՀԻՂՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՍՏԱՑՎԱԾ
ՄԹԵՐՔՆԵՐԻ ՄԵՋ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՆԵՐԻ
ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են ձկան, ջրային կենդանիների, այլ հիդրոբիոտոնների և դրանցից ստացված մթերքների մեջ վտանգավոր նյութերի (խումբ Ա, անաբոլիկ ազդեցությամբ օժտված դեղամիջոցներ, որոնք երաշխավորված չեն կիրառելու անասնաբուծությունում, և խումբ Բ, անասնաբուժական դեղամիջոցներ՝ ներառյալ արգելված դեղամիջոցները, որոնք հնարավոր է օգտագործվեն անասնաբուժական նկատառումներով, ինչպես նաև քիմիական աղտոտիչները) մնացորդային առավելագույն քանակների (այսուհետ՝ մնացորդային նյութեր) հսկողության իրականացման համար անհրաժեշտ կարգը, նմուշառման ընթացակարգը և դրա պայմանները:

2. Նմուշառումը կատարում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչությունը (այսուհետ՝ տեսչություն)՝ պետական վերահսկողության իրականացման շրջանակներում:

3. Տեսչությունն ապահովում է ձկան, ջրային կենդանիների, այլ հիդրոբիոտոնների և դրանցից ստացված մթերքների մեջ մնացորդային նյութերի հսկողության արդյունքների գրանցման ձևաթղթի լրացումը՝ Եվրոպական միությունում ընդունված ծրագրային համակարգի համաձայն:

4. Մնացորդային նյութերի հսկողության արդյունքների գրանցման ձևաթուղթը պարունակում է հետագոտված նմուշների և դրական արդյունքների մասին քանակական տեղեկատվություն՝ ըստ նմուշների տեսակների՝ համաձայն ձևի:

5. Հսկողության ենթակա մնացորդային նյութերը պատկանում են Ա և Բ խմբերին.

1) Ա խումբը ներառում է անաբոլիկ ազդեցությամբ և օգտագործման համար չերաշխավորված նյութերը՝

ա. ստիբեններ, դրանց աղեր և եթերներ՝ Ա1 (A1),

բ. անտիթիրոիդներ (վահանաձև գեղձի) ազենտներ՝ Ա1(A2),

գ. ստերոիդներ՝ Ա3 (A3),

դ. ռեզորցիկլիկ թթվային լակտոններ՝ ներառյալ գերանոլ Ա4-ը (A4),

ե. բետա-ագոնիստներ Ա5(A5),

զ. նյութեր, որոնց համար մնացորդային առավելագույն քանակ սահմանված չէ՝ Ա6 (A6).

2) Բ խումբը ներառում է Բ1՝ անասնաբուժական դեղամիջոցների՝ ներառյալ գրանցում չստացած, բայց գործնականում օգտագործվող նյութերը, Բ2՝ այլ անասնաբուժական դեղամիջոցների և Բ3՝ աղտոտիչների խմբերը՝

ա. Բ1 խմբի անասնաբուժական դեղամիջոցներն են հակամանրէային նյութերը՝ ներառյալ սուլֆանիլամիդային պատրաստուկները և խինոլոնները,

բ. Բ2 խմբի այլ անասնաբուժական դեղամիջոցներն են՝

Բ2ա (B2a)՝ հակահելմինթոզային միջոցները,

Բ2բ (B2b)՝ հակակոկցիդոզային միջոցները, այդ թվում՝ նիտրոիմիդազոլները,

Բ2գ (B2c)՝ կարբամատները և պիրեթրոիդները,

Բ2դ (B2d)՝ սեդատիվները,

Բ2ե (B2e)՝ ոչ ստերոիդային, հակաբորբոքային դեղամիջոցները,

Բ2զ (B2f)՝ դեղաբանական ակտիվ այլ նյութեր,

գ. Բ3 ադոտոիչներն են՝

Բ3ա (B3a)՝ քլորի օրգանական միացությունները (PCBs),

Բ3բ (B3b)՝ ֆոսֆորի օրգանական միացությունները,

Բ3գ (B3c)՝ քիմիական տարրերը,

Բ3դ (B3d)՝ միկոտոքսինները,

Բ3ե (B3e)՝ ներկանյութերը (դեղաբանական ազդեցությամբ օժտված),

Բ3զ (B3f)՝ այլ նյութեր:

6. Ձկան, ջրային կենդանիների, այլ հիդրոբիոնտների և դրանցից ստացված մթերքների մեջ անասնաբուժական դեղամիջոցների՝ մնացորդային նյութերի հսկողությունն իրականացվում է տվյալ նյութի լաբորատոր հայտնաբերման՝ Եվրոպական միությունում ընդունված ստանդարտով և ՀՍ ԻՍՕ 17025 հավատարմագրված լաբորատորիայում: Լաբորատորիաներն ընտրվում են մրցութային տարբերակով:

7. Լաբորատոր հետազոտման համար անհրաժեշտ նմուշը ներկայացվում է ստանդարտով սահմանված քանակությանը համապատասխան:

8. Լաբորատոր փորձարկումներով անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային քանակների հսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի «Կենդանական ծագման մթերքներում անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային առավելագույն քանակները սահմանելու մասին» N 1196-Ն որոշմամբ սահմանված ցուցանիշներին համապատասխան:

9. Ընտրված փորձարկման լաբորատորիաները վտանգավոր նյութի հայտնաբերման դեպքում պարտավոր են մեկօրյա ժամկետում տեղյակ պահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

10. Նմուշների թիվն Ա խմբի նյութերի հսկողության համար կազմում է ընդհանուր նմուշների 1/3-ը, Բ խմբի նյութերի համար՝ 2/3-ը:

11. Ա խմբի նյութերի հսկողության համար նմուշառում կատարվում է արտադրող, վերամշակող, իրացնող կազմակերպությունում, Բ խմբի նյութերի հսկողության համար՝ իրացնող կազմակերպությունում պատրաստի արտադրանքից, իսկ մնացորդային քանակների դրական արդյունքի հայտնաբերման դեպքում՝ նաև արտադրող կազմակերպությունում:

12. Մինչև 100 տոննա ձկան արտադրողականություն ունեցող կազմակերպությունում կատարվում է տարեկան մեկ նմուշառում:

13. Նմուշառման ընթացքում նմուշների թիվը կարող է լինել մեկ և ավելի՝ կախված տվյալ նյութի նկատմամբ կատարվող անալիտիկ մեթոդի պահանջներից, նաև ձկան տեսակից և չափից:

14. Նմուշառումը կատարվում է կենդանի, թարմ սառեցված, խորը սառեցված, սառը և տաք պայմաններում ծխեցված, ապխտած ջրային կենդանիներից:

15. Նմուշառման մեջ ընդգրկվում են նաև ձկնաբուծությունում օգտագործվող այն անասնաբուժական դեղամիջոցները կամ քիմիական նյութերը, որոնք կարող են բնապահպանական աղտոտման պատճառ լինել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ք Ա Ն Ա Կ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԵՎ ԴՐԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մնացորդային նյութի խումբը		
	Նմուշառման թիվը	Դրական նմուշների թիվը
A1		
A2		
A3		
A4		
A5		
A6		
B1		
B2		
B2a		
B2b		
B2c		
B2d		
B3a		
B3b		
B3c		
B3e		